ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԶԱՐԵԹ ՏԱՂԱՎԱՐՅԱՆԸ ԵՎ ԻՐ ՀԻՄՆԱԴՐԱԾ «ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» ՀԱՆԴԵՍԸ

Արևմտահայ մշակութային-կրթական գործիչ, բնագետ, բժիշկ, խմբագիր և բանաստեղծ Նազարեթ Տաղավարյանը ծնվել է 1862 թվականի դեկտեմբերի 25-ին Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքում (այժմ՝ Թուրքիայի տարածքում):

1869 թվականին ընդունվել է Կ.Պոլսի Սկյութար-Սելամերզի ազգային վարժարանը: Հետագայում ուսումնառությունը շարունակել է Ղալաթիայի Լուսավորչական վարժարանում, որի տնօրենն էր հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, խմբագիր և մանկավարժ Ստեփան Փափազյանը (1840-1888): Ուսման ծարավը 16 տարեկան Տաղավարյանին տանում է Ֆրանսիա, ուր նա 1878-83 թվականներին սովորում է Փարիզի երկրագործական բարձրագույն վարժարանում: 1883-ին երկրագործական ճարտարագետի տիտղոսով վերադառնում է ծննդավայր Սեբաստիա, ուր անսահման նվիրումով և ավյունով որոշում է Ֆրանսիայում ստացած եվրոպական գիտելիքներն ի սպաս դնել իր ժողովրդին: Ստանձնում է Սեբաստիայի Ազգային վարժարանների միացյալ տնօրինությունը: Պաշտոնավարության մի քանի տարիների ընթացքում երիտասարդ մանկավարժը, կիրառելով Ֆրանսիայում ստացած բժշկական, առողջապահական և բնագիտական տարաբնույթ գիտելիքները, հիշյալ կրթօջախներում գիտակրթական մակարդակը դնում է ամուր հիմքերի վրա: Չբավարարվելով ծեռք բերածով. «Տաղավարյանը վերադառնալով Սեբաստիա, ստանձնել է Ազգային վարժարանների միացյալ տնօրինությունը, բարեկարգել վարժարանները, ստեղծել չափահասների համար կիրակնօրյա դպրոցներ, փոփոխություններ մտցրել ուսումնական ծրագրերում, հիմնել ընկերություն, որը զբաղվել է իգական սեռի դաստիարակության հարցերով»[1]:

Ճակատագրի դառն հեգնանքով Նազարեթ Տաղավարյանի առաջադիմական հայացքները, ինչպես նաև Ֆրանսիայում ստացած բազում ազատամիտ գաղափարներ չեն ընդունվում ծննդավայրի ետադեմ գաղափարախոսություն որդեգրած կղերականության կողմից: Ահա թե ինչու 24-ը դեռ չբոլորած երիտասարդ մասնագետն ու մանկավարժը ստիպված թողնում է ծննդավայրը և Սեբաստիայի կուսակալ Խալիլ Ռիֆատ փաշայի միջնորդությամբ 1885 թվականին վերադառնում է Կ.Պոլիս, ուր երկու տարի ստանձնում է Գատը գյուղ թաղամասի Արամյան վարժարանի տնօրինությունը: Այստեղ ևս. «Նրա ծայնը լսելի չի դառնում տեղի նեղմիտ հոգաբարձությանը: Չկարողանալով

հարմարվել ստեղծված անհպաստ պայմաններին, Տաղավարյանը որոշում է կրկին ուղևորվել Փարիզ բժշկություն սովորելու»[2]:

1892-ին Տաղավարյանն ավարտում է Փարիզի Սորբոնի համալսարանի բնագիտության, իսկ մեկ տարի անց 1893-ին բժշկության ֆակուլտետները: 1893-ին նրան շնորհվում է բժշկագիտության դոկտորի գիտական աստիճան [3,4]: Փարիզում Տաղավարյանը ուսումնառությանը զուգահեռ աշխատել է Ֆրանսիայի մանրեաբան և քիմիկոս Լուի Պաստյորի (1822-1895) հիմնադրած Փարիզի մանրեաբանության (այժմ Պաստյորի անվան) ինստիտուտում: 1892-ին հայազգի բժշկին շնորհվել է հիշյալ ինստիտուտի բժշկական վկայագիր [5]: 1893 թվականին Տաղավարյանը դարձյալ Կ.Պոլսում է: Բժշկագիտության 31-ամյա դոկտորը ստանձնել է Կ.Պոլսի Սուրբ փրկիչ ազգային հիվանդանոցի տնօրենի պաշտոնը միաժամանակ լինելով Բերա թաղամասի ազգային վարժարանի հոգաբարձուն: Իր ազատատենչ և ազգասիրական գաղափարների համար Համիդյան բռնատի-րության տարիներին Տաղավարյանը 1896 և 1900 թվականներին բանտարկվել է:

1905 թվականին նա տեղափոխվել է Եգիպտոս և Կահիրեում աշխատել որպես բժիշկ: Իր մի քանի գաղափարակից գործընկերների հետ ընդգրկվել է Կահիրեում հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշայի (1851-1930) հովանավորությամբ և անմիջական նախաձեռնությամբ հիմնված «Հայկական Բարեգործական Ընդհանուր միություն» հիմնադրամում: Նազարեթ Տաղավարյանը հիշյալ հիմնադրամի հիմնադիր ատենադպիրն ու վարիչն էր[5]:

1908 թվականին Օսմանյան Սահմանադրության հռչակումից հետո Տաղավարյանը Կահիրեից վերադարձել է Կ.Պոլիս, ընտրվել Օսմանյան խորհրդարանի Սեբաստիայի պատգամավոր, զբաղվել ազգարարային հարցի նախագծի մշակմամբ: Նազարեթ Տաղավարյանը հսկայածավալ գործունեություն է ծավալել Կ Պոլսի Ազգային կենտրոնական վարչությունում և քաղաքապետարանում աշխատելու տարիներին:

1914 թվականին Ն. Տաղավարյանը Թիֆլիսում Կովկասի փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովի (1837-1916) հետ քննարկել է Կովկասում Հայ Բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղեր հիմնելու հարցերը: Նույն 1914-ին այցելել է Վաղարշապատ, արժանացել Գևորգ Ե Տփղիսեցի (1911-1930) Ամենայն հայոց կաթողիկոսի ընդունելությանը[6]:

1915 թվականի սահմռկեցուցիչ օրերին Նազարեթ Տաղավարյանը 53 տարեկան էր: Դեռ շատ գործեր կաներ իր այնքան շատ սիրելի ժողովրդի համար: Կատարվում է սակայն այն, ինչը դեռ շատ տարիներ դրանից առաջ ծրագրել էին թուրք ոճրագործները: Վարուժանի, Զոհրապի, Սևակի, Սիամանթոյի, Խաժակի, Ռ.Զարդարյանի և մեր մյուս մեծերի հետ 1915

թվականի հուլիսին նահատակվում է նաև Նազարեթ Տաղավարյանը. «Տարաբախտ Տոքթ. Ն. Տաղավարյան 1915 թվականի հուլիսի 21 կամ 23 Ուրֆային մոտերը նահատակվել է: Աստված միայն գիտե, թե ինչ եղերական պայմաններու տակ»[7]: Նազարեթ Տաղավարյանն իր կարճատև կյանքի ընթացքում վարել է գիտա-մանկավարժական և հասարակական բեղմնավոր և բուռն գործունեություն:

Մեր գրականության և մշակույթի մեծագույն դեմքերց մեկը Գրիգոր Զոհրապն առաջիններից մեկն էր, ով չափազանց դիպուկ և ճշմարտացի է բնութագրել Տաղավարյանին. «Տոքթոր Տաղավարյանի գործունեությունը միայն գիտական հրատարակություններով չէ: Հարգելի բժիշկը, բանասիրական հետազոտություններով ոչ նվազ օգտակար է իր հասարակության: Հայ թատրոնի և հայ դպրոցներու հաստատման վրա իր հավաքած տեղեկությունները շահեկան վավերագիրներ կը կազմեն մեր ժամանակակից կյանքը ուսումնասիրողներուն համար»[8]: Իրավացի է Գրիգոր Զոհրապը: Հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության էջերում հայտնի են բուն մասնագիտությամբ բժիշկներ, ովքեր, որպես բժիշկներ հայ ժողովրդին ծառայելուց բացի, մեծապես նպաստել և օժանդակել են հայ մշակույթին, գրականությանը, հայ կրթօջախների հիմնադրմանը և կայացմանը, գրելով մեծ թվով մասնագիտական դասագրքեր: Նմանօրինակ բժիշկների այդ հրաշալի փաղանգը լավագույնս ներկայացված է ներքոբերյալում.«Հայտնի են մեծ թվով բժիշկներ, որոնք բացի իրենց մասնագիտությունից, մեծապես նպաստել են մեր մշակույթին, այրվել ազգային հոգսերով. Ռուբեն Սևակ, Կարապետ Բասմաճյան, Վահրամ Թորգոմյան, Դմիտրի Ախշարումով, Թեոդոր Թորոսովիչ, Հարություն Հովհաննիսյան, Բագրատ Նավասարդյան, Գևորգ Ախվերդյան, Նազարեթ Տաղավարյան, Կարապետ Փաշայան, Լևոն Հովհաննիսյան, Համբարձում Քեչեկ, Տիգրան Փեշտիլմալճյան, Զավեն Դոլաբջյան, Ժորա Հարությունյան, Թորոս Թորանյան, Զորի Բալայան, Արտակ Համբարձումյան»[9]:

Շուրջ 20 տպագիր և երեք տասնյակից անցնող անտիպ աշխատությունների հեղինակ է Ն. Տաղավարյանը: Բժշկագիտության դոկտորը, իր ժամանակին ճանաչված մանկավարժն ու քաղաքական գործիչը 1880-ականների սկզբից մինչև իր եղերական մահը բժշկությանը, կենսաբանությանը, քիմիային, առողջապահությանը, հայ ժողովրդի պատմությանը նվիրված բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել «Գիտական շարժում», «Երկրագունդ», «Բանասեր», «Ծաղիկ», «Լույս» և այլ պարբերականներում:

Ն. Տաղավարյանը Փարիզում, Սեբաստիայում, Կ.Պոլսում, Կահիրեում գիտության և մշակույթին նվիրված մեծ թվով դասախոսություններ է կարդացել հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն լեզուներով:

Նազարեթ Տաղավարյանի գիտամանկավարժական ժառանգության անքակտելի և հույժ կարևոր մասն է կազմում 1885 թվականին Կ.Պոլսում հիմնադրված «Գիտական շարժում» հանդեսը, որը ցավոք երեք տարվա կյանք ունեցավ: «Գիտական շարժում»-ը հայ պարբերական մամուլի անդաստանում առանձնանում և կարևորվում է մի քանի առումով: Նախ այն. «Հայերեն լեզվով առաջին գիտական հանդեսն է»[10]: Սա ամենևին չի նշանակում, թե մինչ այդ հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության էջերում չեն հրատարակվել բնագիտության հարցերն արտացոլող հայերեն պարբերականներ: Եղել են, սակայն դրանք («Բազմավէպ» (1843), «Երկրագունդ» (1863), «Գիտական շարժում» (1923) և այլն) իրենց էջերն ամբողջովին չեն նվիրել բնագիտությանը և առնչակից այլ հարցերին: «Գիտական շարժում» հանդեսի երկրորդ առանձնահատկությունն այն է, որ այն խմբագրել և իր առաջադիմական գիտամանկավարժական հայացքներն է արտացոլել Փարիզում բժշկական և գյուղատնտեսական փայլուն գիտելիքներ ստացած երիտասարդ մի մասնագետ: «Գիտական շարժում»-ը իր էջերում անդրադարձել է բժշկության, կենդանաբանության, բուսաբանության, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, գիտության այլ տարաբնույթ բնագավառներին: Հանդեսն իր էջերն է տրամադրել աշխարհահռչակ բնագետ-բժիշկների, առողջապահության, սեռական դաստիարակության հարցեր արծարծող մասնագետների կենսագրություններին:

«Գիտական շարժում» հանդեսի 1885 թվականի առաջին համարը, ինչպես և սպասվում էր, բացվում է հիմնադիր խմբագիր Նազարեթ Տաղավարյանի առաջաբան-հանձնարարականով: Շուրջ երկու էջերում Տաղավարյանը հայ կրթօջախներում դասավանդողներին, դրանցում սովորողներին և ընդհանրապես ընթերցող լայն զանգվածներին ներկայացնում է հանդեսի նպատակը, խնդիրները և տպագրվելիք հոդվածների բնույթը: Սիա մի հատված հանդեսի Տաղավարյանի գրած առաջաբանից. «Գիտական ճաշակ օր ըստ օրե կընդհանրանա մեր ազգին մեջ: Հայ վարժարաններ գիտական ծյուղերու ավելի կարևորություն ընծայեն, աշակերտք սիրով և եռանդով կհետևին գիտական դասերուն: Հասարակությունն հանդիսատես գիտության ամենօրյա մեծամեծ հրաշքից սկսած է սիրել ու հարգել զայն: Մեր մեջ եթե ոչ գիտուններ գոնե գիտասերներ օր ավուր շատնալու վրա են և մի բան հայն սկսած է գիտական շարժում մը ստանալ: Այս շարժման առաջնորդ գիտական աշխատություններ և հանդեսներ կը պակսին դեռ մեր մեջ և միայն եվրոպական լեզուաց ծանոթ գիտասերք կրնան իրենց փափաքը լեցնել»[11]:

Ն. Տաղավարյանի՝ վերը նշված մտքերի լավագույն առհավատչյան «Գիտական շարժում» հանդեսում տպագրված հոդվածներն են: Դրանց մեծ

մասը, ինչպես և սպասվում էր, նվիրված են կենսաբանության, բժշկության և առողջապահական խնդիրներին: Հանդեսի առաջին համարում Ն. Տաղավարյանը երկու հոդված ունի.«Տարվինականություն» (հ.1) և «Ինքնածին սերումն» (հ.2): Հանդեսի 1886-1887 թվականներին հրատարակված նյութերի մեջ առանձնանում է Ն. Տաղավարյանի «Բնական պատմությունը» աշխատությունը: Հիմնարար այդ աշխատությունը հատվածաբար նախ տպագրվել է «Գիտական շարժում» հանդեսի էջերում, իսկ ապա առանձին գրքով 1886-ին Կ.Պոլսում:

«Գիտական շարժում» հանդեսի 1885-1887 թվականների համարներում հրատարակվել են հղի կանանց վախի, երևակայության, զավակների սեռին, տղամարդկանց անկարողության, տկարության և կանխահաս ծերացմանը, թոքախտին, աջլիկությանը և ծախլիկությանը, մթնոլորտին, ազգակցական ամուսնություններին, բանականության և բնազդին, երկնաքարերին, ննջող, շարժուն, զգայուն և մսակեր բույսերին, մարդու անատոմիային, կմախքների պատրաստմանը, նվագի սիրահար կենդանիներին նվիրված հետաքրքիր հոդվածներ: Հանդեսն իր համարներում անդրադարձել է նաև մանկավարժությանն առնչվող հարցերին: Այսպես, հանդեսի 1886 թվականի համարներում տպագրված է Սիմոն Հովնանյանի «Մանկավարժական» վերնագրով 12 էջանոց հոդվածը: 1887 թվականի 6-րդ համարում տպագրված է «Վարժարանաց լուսավորություն» երեք էջանոց հոդվածը:

Ն.Տաղավարյանի հիմնադրած «Գիտական շարժում» հանդեսին Խորհրդային Հայաստանում առաջինն արձագանքել է մատենագետ Հ.Պետրոսյանը. «Գիտական շարժում»-ը խմբագրել է հրապարակախոս, մանկավարժ, բժիշկ, հայտնի հասարակական գործիչ Նազարեթ Տաղավարյանը: «Գիտական շարժում»-ը առաջին հայ գիտական ժուռնալն է: Այն 1880-1890-ական թվականներին պայքարել է խավարամոլության և ռեակցիայի դեմ: «Գիտական շարժում»-ում են տպագրվել արժեքավոր նյութեր բնագիտությունից, բժշկականությունից, կենսաբանությունից և այլն: Այս ժուռնալում են տպագրվել Ն. Տաղավարյանի շատ հոդվածներ, որ մատերիալիստական աշխարհայացքով են գրված: Գիտական լույսի տարածման և հատկապես դարվինիզմի պրոպագանդայի համար Ն. Տաղավարյանը Կ.Պոլսի հայոց Ազգային ժողովի կողմից մեղադրվել և հալածվել է»[12]:

«Գիտական շարժում» հանդեսին Խորհրդային Հայաստանում հաջորդ անդրադարձողը Ա.Շտիկյանն է.«Ն. Տաղավարյանը Կ.Պոլսում 1885 թվականին հիմնել և մինչև 1887 թվականը խմբագրել է «Գիտական շարժում» ամսագիրը»[13]:

Աս.Փաշայանն իր ուսումնասիրություններից մեկում Ն. Տաղավարյանի մասին գրել է. «Ն. Տաղավարյանն իր մոտ տասնհինգ աշխատություններ, որոնք նվիրված են կենսաբանությանն ու բժշկությանը, աստղագիտությանն ու քիմիային, հայ ժողովրդի պատմությանն ու հայ գրերի գյուտին տպագրված են «Գիտական շարժում» և այլ ամսագրերում»:

123 տարի առաջ հիմնադրված «Գիտական շարժում» հանդեսի էջերում տպագրված շատ ու շատ հոդվածներ այսօր էլ կարդացվում են չթուլացող հետաքրքրությամբ:

Գրականություն

1. Հայ անվանի բժիշկներ, Երևան, 2002, էջ 87:
2. Փաշայան Աս., Բնագետը, բժիշկը, բանասերը, «Սով. Հայաստան», 1985, N 9, էջ 26:
3. Տաղավարյան Հ., Ազգաբանություն Սեբաստիո Չատրճյան գերդաստանի, Նյու-Յորք, 1957, էջ 8:
4. Փաշայան Աս., Տիտղոսակիր հայեր, Երևան, 2001, էջ 252:
5. Տաղավարյան Հ., Նշվ. աշխ., էջ 17:
6. Տաղավարյան Հ., Նշվ. աշխ., էջ 12:
7. Կարոյան Գ., Մեծ եղեռնի նահատակ հայ բժիշկներ, Պոսթոն, 1957, էջ 30:
8. Զոհրապ Գ., Երկերի ժողովածու, հտ.1, Երևան, 1962, էջ 441:
9. Փաշայան Աս., Գիտության և ոգու ասպետը, Երևան, 2004, էջ 135:
10. Հայ անվանի բժիշկներ, էջ 88:
11. Տաղավարյան Ն., Առաջաբան, «Գիտական շարժում», 1885, հ.1:
12. Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա: Կազմող՝ Հ.Պետրոսյան, Ե., 1956, էջ 485:
13. Շտիկյան Ս., Հայ նոր գրականության ժամանակագրություն(1851-65),Ե., 1983, էջ 377: